ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 13-Ա

«26» փետրվարի 2018 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ԱՐԵԳՆԱԴԵՄ) ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ 0.30000 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻ ԿԱՏԵԳՈՐԻԱ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հաշվի առնելով, որ պետական ծրագրի շրջանակներում Ամասիա համայնքի Արեգնադեմ բնակավայրում հանրակրթական դպրոցի շենքի կառուցման համար տրամադրված հողամասը, համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1526-Ն որոշման և բնակավայրի կադաստրային քարտեզի, հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքի հողամաս, ուստի հողի նպատակային և գործառնական նշանակությանը համապատասխան հողօգտագործում ապահովելու համար, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին՝

ո ր ո շ ու մ է.

1. Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքում (բնակավայր՝ Արեգնադեմ) հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, որով նախատեսվում է՝ համայնքի սեփականությունը համարվող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի **0.30000** հեկտար հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 08-018-0125-0004) փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակություն, այդ հողամասում պետական ծրագրի շրջանակներում կառուցվելիք հանրակրթական դպրոցի շենքի նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու և